# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/69 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**18 հունիսի 2026թ.**

**ք. Երևան**

2026թ. հունիսի 08-ից 18-ը, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում տեղի ունեցավ մուտքի հսկողության համակարգի ձեռքբերման թիվ ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/69 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Կ. Չախոյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի տնտեսական վարչության պետ, գլխավոր ինժեներ, |
| Ա. Ներսիսյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի բանվորական աշխատանքների համակարգող, |
| Ն. Մկրտչյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի տնտեսական վարչության առաջատար մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Կ. Չախոյանը, ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ս. Մելքոնյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր երեք անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացված մասնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների մասին:
4. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

5. Համակարգի միջոցով գեներացված հայտարարություն/ներ/ի և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. հունիսի 08-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 09:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

ՀՀ դրամ

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1-ին | Մուտքի հսկողության համակարգ | 1,000,000.00 | 09.06.2026 09:00 | 1,200,000.00 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև Մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե, հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | «ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊԸ | Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Երևանյան 26; +37498680718 | btraiding@list.ru | 08435286 |
| 2 | «ԱՅԱՅ ՍԵՔ» ՍՊԸ | ք. Երևան Մ. Խորենացի 28, +37460675271 | iisecinfo@gmail.com | 04423755 |
| 3 | «ԳԱԼՍՏՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ ԷԴՎԱՐԴԻ» Ա/Ձ | ՀՀ ԱՐԱՐԱՏ,ՐԱՖՖՈՒ Փ., 73, ՏՈՒՆ, ՄԱՍԻՍ, 0810, +37494919471 | svetlana.galstyan12@gmail.com | 20118275 |
| 4 | «ՊՐԵՄԻՈՒՄ ԼԵԴ» ՍՊԸ | Կոտայքի մ., Քասախ, Գ. Նժդեհի 3, 24, +37498680718 | - | 03580879 |

2026թ. հունիսի 09-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.

2. Ներկայացված հայտերում առկա են Ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

3. Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ **«ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում Հավելված 1-ով ներկայացվող «Դիմում-Հայտարարություն» փաստաթղթում որպես ծածկագիր նշված է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/130», իսկ Պատվիրատուի անվանումը՝ «Երևանի քաղաքապետարան», սակայն սույն գնման ընթացակարգի ծածկագիր է հանդիսանում՝ «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/69», իսկ Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը: Միաժամանակ նշված է, որ ցանկություն է հայտնել մասնակցելու 1-34 չափաբաժիններին, սակայն սույն գնման ընթացակարգի շրջանակներում չափաբաժինների քանակը՝ 1-ն է, իսկ Հավելված 1-ով ներկայացվող «Դիմում-Հայտարարություն» փաստաթղթի 1-ին կետով սահմանված «մասնակցի անվանում» դաշտում նշված է՝ «ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/15», սակայն հատով ներկայացված մասնակցի անվանումն է՝ «ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊԸ: Ինչպես նաև «Դիմում-Հայտարարություն» փաստաթուղթը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, միաժամանակ հավելված 1.3-ով ներկայացվող «Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև» փաստաթուղթը բացակայում է: 1-ին չափաբաժնի մասով ներկայացված «Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» փաստաթղթում բացակայում է Ընթացակարգի հրավերով պահանջվող առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի, արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվությունը և տեխնիկական բնութագիրը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. հունիսի 09-ին Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած Մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և Մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Հ/Հ | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշ | Նախնական առաջարկ | Վերջին առաջարկ | Կարգավիճակ /լրացվում է հայտերի գնահատման վերջնարդյունքում/ |
|---|---|---|---|---|---|---|

| | | | վայրին գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 1 | «ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊԸ | 1200000 | 8880000000 | 20% | 10656000000 | 96000 | 20% | 115200 | **Գնահատվել է անբավարար և մերժվել** |
| | 2 | «ԱՅԱՅ ՍԵՔ» ՍՊԸ | 1200000 | 1000000 | 20% | 1200000 | 970000 | 20% | 1164000 | |
| | 3 | ԱՁ «ԳԱԼՍՏՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ ԷԴՎԱՐԴԻ» | 1200000 | 1199334 | 0% | 1199334 | 990000 | 0% | 990000 | |
| | 4 | «ՊՐԵՄԻՈՒՄ ԼԵԴ» ՍՊԸ | 1200000 | 555000000 | 20% | 666000000 | 555000000 | 20% | 666000000 | Մերժված |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2026թ. հունիսի 11-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.
2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2026թ. հունիսի 15-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետներում չեն ներկայացվել հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2026թ. հունիսի 18-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
3. «ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել որպես անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի առաջին մասի 8-

րդ կետի 8.11 և 8.15 ենթակետերով սահմանված, ինչպես նաև Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջները:

4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտորին՝ սահմանված կարգով:

5. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը* | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊԸ | անբավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2026թ. հունիսի 18-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգը հայտարարել չկայացած, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-ին կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ս. Մելքոնյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

2026թ. հունիսի 18-ին Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Կ. Զախոյան ______________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ա. Ներսիսյան ______________

Ն. Մկրտչյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ս. Մելքոնյան ______________